մԾդ.

Պատրիարք քաղաքիս յակոբ վարդապետն ի բազում ժամանակաց հետէ կրէր և կրէ հիւանդութիւն իմն վտանգաւոր. և արար յաւուրս յայսոսիկ զիմն, ընդ որ ամենայն ստամպօլ քրիստոնեայք և անհաւատք սքանչացան և սքանչանան. և անուն իւր կրկնապատիկ փառաւորեցաւ, և զօր արարն այս է. զի ժողովեաց ի պատրիարքարանն զամենայն վարդապետս և զիշխանս հայոց, և հրաժարեալ ինքն ի պատրիարքութենէ, հաւանութեամբ նոցա կացոյց պատրիարք զգրիգոր վարդապետն զվէքիլն երուսաղէմի, որ թէպէտ չէ այնչափ գիտնական և բանիբուն, բայց է անվնաս և ըստ իմիք ջատագով ուղղափառացս դասուն, զորոյ զկապայ հագնիլն ի վէզիրէն և ես աչօք տեսի: Իսկ ինքն յետ նստուցանելոյն զնա յաթոռ իւր սիրով մեծաւ գնաց ի յիւսկիւտար ի վանքն որ անդ առ ի զդեզօրայս առնուլ վասն հիւանդութեանն. այս եղև ի մայիսի 25 և 26: (Հ. Զաքարիա առ Մելքոնեան, 1764 յունիսի 1. [Կ. Պոլիս]):

մԾե.

Միքայէլ կաթուղիկոսն լիբանանու գրեաց առ փրօփականտայն, թէ խնդրեմ ի ձէնջ զայս շնորհ, զի որչափ ալունno հայ մանկունք գային ձեռնադրելի յինէ թեմէ, յղեսցին առ իս, զի ես ձեռնադրեցից. և սոքա արարին ժողով, և ի ժողովի անդ՝ եղ հաւանութիւն. և ըստ այնմ արարին տէգրէթն, զի միշտ յղեսցին այսպիսիք առ նա: (Հ. Մկրտիչ Աճ. առ Մելքոնեան, 1764 ի Հռոմ ի 2 յունիսի):

մԾզ.

Պատրիարգն երկրիս[1] յոյժ հիւանդացաւ, և բազում եպիսկոպոսք ի պէսպէս քաղաքաց եկին և կուտեցան ի կոստանդնուպօլիս... կոչեաց պատրիարգն զբազում եպիսկոպոսս և զիշխանս եկեղեցեաց. և յետ բազում քննութեան, կոչեաց ինքն զվէքիլն երուսաղէմի զգրիգոր վարդապետն, և առաջի ամենեցուն ետ նմա զզաւազան իւր և զմատանի, և էարկ զփիլոն զանձամբ. և ողջունեաց զնա կոչելով զնա կեցցէ՛ պատրիարգ կոստանդնուպօլսոյ. զնոյնն արարին վարդապետք և իշխանք. և առեալ տարան առ եպարգոսն. իսկ եպարգոսն ծանոյց զայն արքային, և արքայն հաստատեաց զնա վ,եհ ազգին, և եկն նստաւ յաթոռ. իսկ հինն հրաժարեցաւ, և գնաց նստաւ ի վանսն իւսկիւտարու... սորա [Գրիգոր պատրիարքի] իբր կառավարիչ կացուցաւ մեր սարգիս վարդապետն, քանզի զօրով նա երիտասարդ հասակաւ, բարւոք է ունիլ նմա զծերունազարդ ոք ի կառավարել զնա: Եւ ինքն, այս է սարգիս վարդապետն կացուցաւ ի տեղի նորա վէքիլ երուսաղէմի: (Արսենաս եպս. և վ,իք. առ Մելքոնեան, 1764. ի Կոստ. ի յունիսի 2):

մԾէ.

Ի ստամպօլ ի վ,էզիրէն նորոգեալ է եասախն և սաստկացեալ. ոչ միայն զսեաւս զգենուլ որպէս արդէն զգենուին, այլ և զնոյն սեաւն անպաճոյճ զգենուլ. և զխալփախի մորթն նեղ, և ըստ ֆիպրիթճիի առնել են.: (Մելքոնեան առ Հ. Մկրտիչ, 1764 յունիսի 9. [Ս. Ղազար]):

---

1. Յակոբ Նալեան Պատրիարք.